

Կ'ըսուի թէ Թընկերեան ընտանիքը ունեցած է 40 էջով ձեռագիր գրութիւն մը իր նախնիքներու մասին, որ վերջին համաշխարհային պատերազմի առթիւ կորսուած է:

Իբրեւ տղապիտակ երկ Թընկերեանց մասին՝ 20 էջոց փոքրիկ գրութիւն մը միայն ծանօթ է. Al. P. Sirounian, Son Excellence Yaver Pacha Tinghir. Venise 1902:

1. ԹԵՆԿԵՐԵԱՆՅ ՄԱՌԻՍԵ ԵՒ ՆԱԶԱՊԵՏԸ

Գաղափաւ եղած է Թընկերեաններու նախնական ծննդավայրը: Պէրպլերեան¹ որոշ կերպով յիշած է այս կէտը՝ «Գաղափաւի հատավաճառներ» կոչելով զանոնք: Թէ ե՞րբ թողած են վերջնականապէս իրենց նախնեաց բնակավայրը՝ պահպանելու համար Թուրքիոյ մայրաքաղաքը, պատմութիւնը կը լռէ: Այն ստույգ է որ Անկիւրիոյ Թընկերեան գերդաստանի անդամներէն մաս մը մնացած է հոն ու չէ գաղթած: Ասոնցմէ ոմանք կը յիշուին պատմութեանս ընթացքին:

Կ. Պոլսոյ մէջ հաստատուած Թընկերեաններէն հնագոյն անձը, որուն մասին յիշատակութիւն կ'ըլլայ՝ Գրիգոր Խօնայ Տնկընեանց² կամ Գրիգոր Խօնայ Տնկընեանց³ անունով ծանօթ է: Մենք կը համարինք այս անձը Թընկերեան գերդաստանի նահապետը, նկատի ունենալով նաեւ որ Պարիսարեան Պր. Ղեւոնդ Թընկերեան, 1943ին, Վիեննայաբնակ իր մէկ ազգական Պր. Պօղոս Թընկերեանի ուղղած նամակին մէջ Սօճայ Գրիգորը իրենց գերդաստանի նահապետը կը համարի:

Ըստ Ղեւոնդ Թընկերեանի՝ Գրիգոր Սօճայ ծնած է 1701ին, եղած է թարգման Պոլսոյ Ֆրանսական դեսպանատան եւ փայլած Ֆրանսական պաշտպանութիւն Chevalier de Guignard եւ Comte de St. Priest գեսպաններու պաշտօնատարութեան շրջաններուն (1768—1788):

Գրիգոր Սօճայ ԺԸ. դարու Պոլսոյ Հայ Կաթ. Հասարակութեան Երեւելիներէն ու ազգեցիկներէն մին եղած է⁴: Իր մասին մանրամասնութիւններ կը պակասին: Հետաքրքրական է սակայն յիշել որ 1778ին երբ Զաքարիա Կաղզուանցի Պատրիարքը Հայ

Կաթ. մեծամեծները իր քով կը կանչէ, անոնց խտուրտ պատուերէն որ Տրիեստ Նաւահանգստի հետ ո՛րեւէ առեւտրական կապ չհաստատեն եւ իրենց աղաքը հոն ուսում առնելու չզրկեն՝ իրեն ներկայացող Հայ Կաթողիկէներու պատգամաւորութեան գլուխ անցած կը գտնենք «Թընկեր Օղլու» մը⁵, որ ուրիշ մէկը չի կրնար եղած ըլլալ, եթէ ոչ Գրիգոր Սօճայ: 1778 Օգոստ. 27ին Պոլսէն գրուած նամակի մը մէջ կը կոչուի նա «Թընկեր Օղլու Գրիգոր» (Գր. Վիենն. Մխիթ. 1778 Օղ. 27): Չենք կարծեր թէ Գրիգոր Սօճայի որդին ըլլայ վերջինս:

Գրիգոր Սօճայ ամուսնացած է Հռիփսիմէի հետ, որուն անունն կը հանդիպինք 1789ին գրուած նամակի մը մէջ, ուր Թընկեր Սիմոն — հաւանորէն իր որդին — պատարագուցներ կու տայ Գրիգոր Խօնայի, անոր ծնողաց եւ իր (Թընկեր Սիմոնի) մօր Հռիփսիմէի հոգւոյն համար⁶:

Գրիգոր Սօճայ վախճանած է 1781 Օգոստոս 13ին, բայց թաղուած կատարուած է շատ եղբրական պարագաներու մէջ, ինչ որ ժամանակի հայ ժողովուրդի արուեստ վիճակը եւ խաւար մտայնութիւնը կը պատկերացնէ: Չենք ուզեր կրկնել յիշատակութիւնը այդ արարածի զէպքին, որ արդէն հրատարակուած է երկու ժամանակակիցներու զատ գատ նամակագրութիւններով⁷:

Պէրպլերեան՝ խօսելով այդ ժամանակուան Յովհաննէս Համատանցի Պատրիարքի խտուրտներու վրայ՝ կը յիշէ Գրիգոր Սօճայի պարագան, գրելով. «... յայտ միջոցի մեռաւ Թընկերեան Գրիգոր եւ գլխի երից աւուրց ժահահոտեալ քաղեցաւ խղիւքաբ⁸»:

Գրիգոր Սօճայ թաղուած է Պէյօղլու-Բերայի, պոլսահայ հնագոյն գերեզմանատան մէջ:

2. ԹԵՆԿԵՐԵԱՆՅԵՐՈՒ ԱՌԱՅԻՆ ԵՒ ԵՐԿՐՈՐԿ ՍԵՐՈՒՆԳՆԵՐԸ

Ա. Թընկերեաններու նահապետ Գրիգոր Սօճայի յաջորդող առաջին սերունդի մասին շատ քիչ բան գիտենք: Թէեւ կը յիշուին իր

⁵ Վիեննա, Staatsarchiv, St. K. Turcica 1778:
⁶ Գր. Վիենն. Մխիթ. 1789:
⁷ Հանդ. Ամս., անդ՝ էջ 87: — Նամակագիր մը կը տողէ. «Ի 13 Օգոստոսին վախճանեցաւ Տրեկրեան Սօճայ Գրիգորն բարի մահուամբ... գոլով... պարաթըր (ստանիկ) Գաղղեացոց...» (Գր. Վիենն. Մխիթ. 1881 Օգոստ. 25):
⁸ Անդ՝ էջ 3:

¹ Աւետիս Պէրպլերեան, Պատմութիւն Հայոց, 4. Պ. 1860, էջ 190: — Հմմտ. Հ. Սահազ Վ. Սրապեան, Ս. Յակոբ Աղբ. Հիւանդանոց, Վիեննա 1915, էջ 14:
² Գր. Վիենն. Մխիթ. 1777:
³ Հանդէս Ամսօրեայ, 1911, էջ 87:
⁴ Անդ:

«որդիքը», որոնք ուզած են իրենց հօր փառաւոր թաղում մ'ընել⁹, բայց թէ ո՞վ եւ քանի՞ հոգի էին անոնք՝ բացատրութիւն չի տրուիր:

Ղեւոնդ Թընկերեան իր վերայիշեալ նամակին մէջ ըսելէ յետոյ թէ Գրիգոր Սօճայ երկու մանչ զաւակ ունեցած է, կու տայ անոնց անուններն ալ. Յովհաննէս եւ Կարապետ: Սակայն 1777 Մարտ 4ին Պոլսէն Տրիեստ գրուած նամակ մը կը վկայէ որ Գրիգոր Սօճայ երկուսէ աւելի որդի ունեցած է: Նամակը գրողն է Մխիթարեան Վարդապետ մը, Հ. Անանիա, որ ուղղելով նամակը Հ. Զաքարիայի՝ կը տեղեկագրէ. «Այլեւ զմիջակ որդին Տընկերեանց Սօճայ Գրիգորին նշանեցին թոռան Նալպանտեանց Ստեփան Աղայի Կիւմրիչխանեցոյ¹⁰»:

Յայտնի է թէ համեմատականի մէջ «միջակ» չ'ըսուիր, եթէ որդիքը երկու են. «միջակ» բացատրութիւնը կ'ենթադրէ առնուազն երեք, որոնց միջինը՝ «միջակ» է:

Դժբախտաբար նամակագիրը չի տար Գրիգոր Սօճայի այդ «միջակ» որդւոյն անունը: Բայց կը թուի թէ Ղեւոնդ Թընկերեանի յիշած Կարապետն է, զոր ուրիշ ժամանակակից մը եւս կը յիշէ: Ահա թէ ինչպէս: Անտոն Քէօլեան, ԺԹ. դարու առաջին քառորդին գործող հայ ուսուցիչ մը, 1817 տարիներու զէպքերու մասին: Արդ, 1816 այդ Օրագրութեան մէջ կը գրէ նա. «1816 այդ Օրագրութեան մէջ կը գրէ նա. «1816 Ապրիլ 24. վախճանեցաւ Կիւմրիչխանցի Պետրոս Ամպերպօղլուն, որ էր խորք աներ Թնկերեան հանգուցեալ Կարապետի¹¹»:

Թէ ինչո՞ւ «խորթ աներ» կը կոչուի Կարապետի աները՝ Պետրոս Ամպերպօղլուն՝ չենք գիտեր. սակայն նպատաւոր է մեր խնդրոյն համար, քանի որ կրնայ մեկնել երկու Կիւմրիչխանցիներու — հօր եւ որդւոյ — մականունի տարբերութիւնը:

Ժամանակագրական տեսակէտով ալ հաւանական կ'երեւայ որ Գրիգոր Սօճայի «միջակ» որդին Կարապետի հետ նոյն անձն ըլլայ, քանի որ նա 1777ին կը նշանուի, իսկ սա 1816ին իր աները կը կորսնցնէ:

1. Կարապետ Թընկերեան ծնած է 1754ին: Իր բնակարանը կը գտնուէր Գան-

⁹ Հանդ. Ամս., անդ:
¹⁰ Գր. Վիենն. Մխիթ. 1777:
¹¹ Օրագրութիւն Անտոն Քէօլեանի, Զեռագիր Վիենն. Մխիթ. Մատենադարանի:

տիլլի: Գործի ասպարէզը եղած է սեղանաւորութիւն: Ամուսնացած է Մարիամի հետ եւ ունեցած զաւակներ, որոնց վրայ քիչ յիշատայ: Մեռած է 1808 Օգոստ. 1ին կաթուածի հետեւութեամբ եւ թաղուած Բերայի գերեզմանատունը: Այդ թուականի տակ կը գրէ Քէօլեան. «Թնկերեան Կարապետ վախճանի եւ հանդիսիւ բերին ի Պէյօղլու ի Սանտիլլէն, որ էր տամբայով վախճանեալ¹²»:

Կարապետ Թընկերեանի տապանագիրը կը գտնենք Հ. Գրիգորիս Վ. Գալեմփիաբեանի «Պատմութիւն Բերայի գերեզմանատան» դժբախտաբար կիսաւարտ մնացած շատ արժէքաւոր ուսումնասիրութեան մէջ, ուր կ'ըսուի.

«Էլլի տէօրտ ալիէ միւսին սահիպէ Էվլատու աեալ. վէ բազպէթուշանի պէրֆեամիլ իֆէն, Էմրու հագ գուհուրի իլէ, քէրֆի տարի դամ իյլէյիւլ» մէրիում օլան, սալը Էնֆարէ վի սարաֆ կէրուհիմտէն՝ Թընկերո գատէ Կարապետ ալանըն մէգարի բահմէթ մէֆեանի:

Սահմա պաֆի՝ նիւմլէմիգ պուքարիֆէն րեհպէրի, Էատի բահմէթիլէ սէօյլէ ողջոյն իլէ հայր մէրի:

Յամի Տն. 1808 Օգոստոս 1»:

2. Ըստ Ղեւոնդ Թընկերեանի՝ Գրիգոր Սօճայի առաջին (անդրանիկ) որդին է Յովհաննէս, որուն մասին սակայն ոչ մէկ ծանօթութեան հանդիպած ենք: Իր անունը կը յիշուի Հայ Կաթողիկէ երեւելիներու ցանկի մը մէջ (Գր. Վիենն. Մխիթարեանց 1781): Այնպէս կ'երեւայ թէ ԺԹ. դարէն առաջ վախճանած է: Իր սերունդի մասին յաջորդ հաստատուածին մէջ:

3. Գրիգոր Սօճայի երրորդ որդին է Յարութիւն Թընկերեան, որուն մասին մեր Գրեանի հին նամակներէն մէկուն մէջ կը հանդիպինք ակնարկութեան մը: Նամակագիրը — Հ. Անդրէաս — Յարութիւն Թընկերեանի մահը ծանուցանելով, կը գրէ. «Այսօր թաղեցաւ ի գերեզմանատան ի Պէյօղլու ի նախընթաց գիշերի հանգուցեալ Թնկերեան Յարութիւն աղայն, փեսայ Տիգրեանց, հօրեղբայր Պ. Հ. Կարապետին մերոյ» (Գր. Վիեննայի Մխիթարեանց, 1821 Ապրիլ 25):

¹² Օրագրութիւն Անտոն Քէօլեանի, 1808 Օգոստոս 1:

Հ. Կարապետի նախկին անունն է Պետրոս Թրեկերեան, որդին Գրեգոր Խոսրովի «միջակ» որդի Կարապետի: Այդ, Յարութիւն Թրեկերեան Հ. Կարապետի հորեղբայրն ըլլալով՝ Յարութիւն կ'ըլլայ եղբայրը Կարապետ Թրեկերեանի եւ որդի Գրեգոր Խոսրովի:

Յարութիւն Թրեկերեան ծնած է 1766ին¹³: Ամուսնացած Յովհաննէս Զէյլիի Տիգրանի աղջկան՝ Տիրուհիի (ծն. 1776) հետ: Ունեցած են զաւակներ, որոնցմէ 4ը կը յիշուին սա ձեւով. «Յարութիւն Թրեկերեանի երկու որդիքն եւ մեծ դուստրն»: «Մեծ դուստր» բացատրութիւնը կը յայտնէ որ Յարութիւն եւ Տիրուհի ունեցած են ուրիշ՝ կրտսեր աղջիկ մ'ալ (ի Թուղթս Հ. Գր. Գալէմբիա-րեանի):

Յարութիւն Թրեկերեանի գործը, ապահովաբար, Տիգրաններու փողերանոցի աշխատանոցն եղած է: Բերայի մէջ ունեցած է փայտաշէն տուն մը:

Իբրեւ փեսայ Տիգրաններու՝ իր ընտանիքով ենթարկուած է 1819ի Տիգրաններու պատահած զարհուրանքին: 1819 Օգոստոսէն Հոկտեմբեր Տիգրաններու, անոնց ազգականներու եւ իրենց հետ որեւէ գործ ունեցող 40 հոգիներու հետ Յարութիւն Թրեկերեան եւս կը ձերբակալուի իր երկու որդիներով եւ կը բանտարկուի փողերանոցի մէջ, մահուան երկիւղով: Կինը եւ մեծ դուստրը կը զրկուին Հայոց Պատրիարքարան: Հոկտ. 4ին չորս Տիգրաններու սպանդէն վերջ՝ միւս Հայ Կաթողիկէներու հետ տանջանքի կ'ենթարկուի նաեւ Յարութիւն Թրեկերեան, դրամ պահանջուելով իրմէ: Հոկտ. 1ի կէսերուն իր երկու որդիքը ազատ կ'արձակուին: Նոյնպէս Պատրիարքարանէն ազատ կ'արձակուին 60ի չափ կիներ եւ աղջիկներ, բայց չեն արձակուիր Յարութիւնի կինն ու մեծ աղջիկը ուրիշ քանի մը կիներու եւ աղջիկներու հետ:

1820 Մարտ 1ին վերջապէս ազատ կ'արձակուի Թրեկերեան Յարութիւն, անշուշտ նաեւ կինն ու աղջիկը: Իսկ 14 հոգի կ'աքսորուին զանազան վայրեր:

Պէրպէրեան (Պատմ. էջ 103) սխալմամբ

¹³ Տիգրաններու Տոհմադրին մէջ (տե՛ս Հ. Գաբրիէլ Մեմէվիշեան, Ազգաբնութիւն ազնուական զարմին Տիգրանց, Վիեննա 1890, էտեւր) 1768 նշանակուած է Յարութիւն Թրեկերեանի ծննդեան թուականը, որ կը կարծենք թէ սխալ է: Հ. Գրեգորիս Գալէմբիաբեանի թղթերուն մէջ 1766 նշանակուած է յենով հին նամակներու վրայ:

այդ աքսորուողներու մէջ կը համարի նաեւ «Թրեկերեան Յարութիւն եւ Աքանաս», որոնք իր կարծիքով Կիպրոս կ'աքսորուին: Պէրպէրեան շփոթած է զասոնք ուրիշ երկու անուններու հետ: Կիպրոս աքսորուողներն են. «Եղբարք Մաղլըմեան Աքանաս եւ Յակոբ», ինչպէս կը ստուգենք մեր Մատենադարանի մէջ եղած Զեռագիր Ժամանակագրութենէ մը Հ. Գրեգորիս Վ. Գալէմբիաբեանի անտիպ գործերուն մէջ:

Այս հոգետանջ սպառուներէն յետոյ երկար ապրած չէ Յարութիւն Թրեկերեան: Յաջորդ տարի, 1821 Ապրիլ 23ին, կը կնքէ իր մահկանացուն եւ կը թաղուի Բերայի գերեզմանատունը (Դիւ. Վիենն. Մխիթ. 1821 Ապրիլ 25):

Տիրուհի, իր կինը, մեռած է 1837 Փետր. 4ին (Դիւ. Վիենն. Մխիթ. 1837 Փետր. 4):

4. Գրեգոր Խոսրով ունեցած է մեր կարծիքով չորրորդ որդի մ'ալ, զոր կը համարենք իր անդրանիկը: Այդ անձն է Թրեկեր Սիմոն:

Թրեկեր Սիմոն կը յիշատակուի Պոլսոյ մէջ 1787ին, 1789ին, 1795ին եւ 1807ի առնչները: Կը ներկայանայ իբրեւ զուլիս տոհմի մը եւ անկախ տան մը: Կը գովուի իր Աստուածսիրութիւնն ու ազգասիրութիւնը: Կը վերաբերի մարդկային այնպիսի խմբի մը, որոնց «յիշատակը օրհնութեամբ եւ գովութեամբ պիտի յիշուին յաւիտեանս Ժամանակաց»: Այդ է «Տունն Թրեկեր Սիմոն աղայի»¹⁴:

Իր բարեպաշտութեան իբր ապացոյց կրնանք յիշել հետեւեալը. 1795 Օգոստոս 25ին գրուած նամակ մը կ'իմացնէ որ «Սիմոն աղա Թրեկերեան» Մխիթարեան Վարդապետներու կը յանձնէ 512 պատարագուց՝ մշտնջենաւոր պատարագներու համար¹⁵: Իսկ ատկէ առաջ, 1787 Դեկտ. 28ին Հ. Անանիայի կը յանձնէ 4500 Փր. մշտնջենաւոր պատարագ ընել տալու համար «խանգուցեալ Գրիգոր աղա Թրեկերեանի հոգւոյն», այն է Գրեգոր Խոսրովի, որ 1781ին մեռած էր: Թրեկեր Սիմոն 1787 Դեկտ. 31ին «վասն հոգւոյ հոր եւ մօր նոյն Թրեկերեան Գրիգոր աղայի մշտնջենաւորի (պատարագ) Փր. 1230» կուտայ. եւ վերջապէս 1789 Յունիս 1ին «վասն

¹⁴ Յ. Ասկերեան, Հասունեան քաղաքականութիւն, Տփլիս 1868, էջ 16—17:
¹⁵ Դիւան Վիենն. Մխիթ. 1795:

50 պատարագայ վասն հոգւոյ մօր իւրոյ Հոփսիսիմէի Փր. 2000» կը յանձնէ¹⁶:

Գրեգոր Խոսրովի եւ անոր ծնողաց հոգիներուն համարմշտնջենաւոր պատարագ ընել տուողը, Թրեկեր Սիմոն, կը ցուցնէ թէ սերտ կապակցութիւն ունի անոնց հետ: Այդ կապակցութիւնը մենք կը համարինք ամենամեծ հաւանականութեամբ հոր եւ որդւոյ, զաւակի եւ ծնողաց միջեւ եղած աղերս: Աւելին. Թրեկեր Սիմոն, ըստ մեզ, է անդրանիկ որդին Գրեգոր Խոսրովի:

Այս տեղիքէն կ'իմանանք նաեւ թէ Սիմոն Թրեկերեանի մայրն է Հոփսիսիմէ, հետեւաբար Հոփսիսիմէ է կից Գրեգոր Խոսրովի, որ ուրիշ կողմէ անձանօթ է:

Թրեկեր Սիմոն 1798ին Նապոլէոնեան պատերազմներու առթիւ կը բռնուի իբրեւ Վենետիկի սեղանաւոր. «Նոյնպէս կալան եւ Սիմոն աղայն Տրեկերեան, որ էր ստաւֆ Վենետիկի, թէպէտ ոչինչ փնտրուեալ նմա եւ ազատեցին զնա յետ քանի մի աւուրց» (Դիւ. Վիենն. Մխիթ. 1798 Սեպտ. 10):

1800ին պատճառ կ'ըլլայ Կուտինայի հարձանքի դադարման (Դիւ. Վիենն. Մխիթ. 1800):

1801ին «սըրիպէնչէ» հիւանդութեամբ պառկած է (Դիւ. Վիենն. Մխիթ. 1801 Հոկտեմբ. 10):

1807 Նոյ. 29ին «վախճանեցաւ Թրեկերեան Սիմոն աղայն» (Դիւ. Վիենն. Մխիթ. 1807 Դեկտ. 10):

5. Թրեկեր Սիմոնի մէկ քոյրը կը յիշուի, որ ամուսնացած է Էմիլիոսեան Երկան Յովհաննէսի հետ: Վերջինիս մահուան առթիւ կը գրէ Քէօլէեան. «1811 Յուլիս 27 վախճանի Էմիլիոսեան Երկան Յովհաննէսն քեռայր Թրեկերեան Սիմոնի, որ եւ ինքն էր Գաղատացի... ամաց 65»¹⁷:

Ընդունելով թէ Թրեկեր Սիմոն Գրեգոր Խոսրովի անդրանիկ որդին է՝ հաստատած կ'ըլլանք թէ Գրեգոր Խոսրով ունեցած է նաեւ դուստր մը, որուն անունը անձանօթ կը մնայ:

6. Հաւանօրէն Գրեգոր Խոսրովի ուրիշ մէկ դուստրն է, որ ամուսնացած կ'ըսուի «Անանիայ Օղլու Խոսրով Յակոբին» հետ, որուն երկու որդիները Հոսոմ ուսանող են 1788ին: Գէորգ Վարդապետ 1788 Դեկտ. 22ին

¹⁶ Անդ. 1787 եւ 1789:
¹⁷ Օրագրութիւն, 1811 Յուլ. 27:

Հոսոմէն Պոլիս գտնուող Մխիթարեաններէն Հ. Յակոբոսին կը գրէ. «Ընդ առնուլդ զգիրս՝ կոչեա իսկոյն Տրեկեր Օղլուի փեսան Անանիայ Օղլու Խոսրով Յակոբն, որ ունի աստ գերկուս որդիս, եւ զմինն ես ուսուցանեմ» (Դիւ. Վիենն. Մխիթ. 1788):

Բ. Գրեգոր Խոսրով Թրեկերեանի երկրորդ սերունդի մասին աւելի ընդարձակ ծանօթութիւններ ունինք: Խոսինք առաջին սերունդի կարգին համեմատ:

1. Կարապետ, Գրեգոր Խոսրովի «միջակ» որդին ունեցած է 3 մանչ եւ 1 աղջիկ. Պետրոս, Աննոն, Աստուածատուր, աղջկան անունը անձանօթ:

ա. Պետրոս Թրեկերեան, թուականի փոքր տարբերութեամբ, երկու անգամ կը յիշուի իբրեւ Կարապետ Թրեկերեանի որդի. առաջին անգամ Վիեննայի Մխիթարեան Վարդապետներու ընդհանուր ցանկին մէջ, ուր Պետրոս Թրեկերեան արձանագրուած է իբրեւ որդի Կարապետ եւ Մարիամ Թրեկերեաններու իսկ երկրորդ անգամ՝ Քէօլէեանի Օրագրութեան մէջ, ուր որոշապէս կ'ըսուի. «Թրեկերեան Կարապետի որդի Պետրոսն»: Առաջինին համեմատ Պետրոս 1811 Հոկտ. 21ին Վիեննայի Վանքի կղերանոցը մտած է՝ վարձակալու համար. իսկ երկրորդին հաղապետ ըլլալու համար. իսկ երկրորդին համայն՝ Վիեննայի Մխիթ. վարդապետ մը, մահացած է Վիեննայի Շիւքիւրեան (Կուտինացի) «Հ. Անդրէաս Շիւքիւրեան կը տանի 11 1814 Յուլիս 8ին Պոլսէն Վիեննա կը տանի 11 կղերացու տղաք, որոնց մէջ նաեւ Թրեկերեան Կարապետի որդի Պետրոսն»¹⁸: Չենք կարապետի որդի Պետրոսն յիշուի Վարդապետներ «Թրեկերեան Պետրոս որդի Կարապետի»ներ ստեղծելով: Թէ այդ երկու Պետրոսներն ալ տանի անձն են անկէ յայտնի կ'ըլլայ որ Վիեննայի Մխիթարեանց ընդհանուր ցանկին մէջ միայն մէկ Պետրոս Թրեկերեան արձանագրուած է:

Ըստ վերոյիշեալ Մխիթարեանց ցանկին՝ Պետրոս Թրեկերեան ծնած է Կ. Պ. 1799 Սեպտ. 3ին: Իր ծնողքն են Կարապետ եւ Մարիամ: Վանք մտած է 1811 Հոկտ. 21ին, Նորընծայ եղած 1813 Սեպտ. 7ին՝ անելով Կարապետ անունը. ուխտ դրած է 1816 Ապրիլ 15ին, քահանայ ձեռնադրուած 1818 Նոյ. 1ին: Քահանայ ձեռնադրուելէ յետոյ

¹⁸ Օրագրութիւն Անտոն Քէօլէեանի, 1814 Յուլիս 8:

Պոլիս զրկուած է: 1827—1830ի Հայ Կաթողիկէներու հարաձայնութիւն ուրիշ Կաթ. Վարդապետներու հետ վտարուած է Պոլսէն: Նախ կը հանդիպի Բուկարեստ, ուսկից 1828 Յունուար 8ին ճամբայ կ'ելլէ դէպի Վիեննա. մինչեւ Մայիս կը մնայ վանքը, 1828 Մայիս 11ին կ'ելլէ վանքէն: Վանքէն ելլելէ վերջ կոչուած է «Տ. Պետրոս Թընկեր», ինչպէս 1828 Սեպտ. 11ին դրուած նամակ մը կը տեղեկացնէ, գրելով. «Լուայ եթէ Տէր Պետրոսն թնկերեան, չգտեալ հանգիստ ի Հոովմ, եկեալ է ի Բեզարո (Իտալիա) եւ անդ բնակի¹⁹»:

Որքան կ'երեւայ՝ քիչ վերջ Տէր Պետրոս Թընկերեան աշխարհականացած, Իզմիր դարձած եւ Պուճա գիւղին մէջ բնակած ու հոն ալ մեռած է: Այս մասին Այվազեան²⁰ իր «Շար»ին մէջ «Պետրոս Կ. Թնկեր» վերնագրի տակ մանրամասնօրէն գրած է, որմէ կը համառօտենք. «Պետրոս-Թնկեր՝ որ երբեմն Վիեննայի Միսիթարեան Վարդապետներէն էր, մայրաքաղաքիս Հայ-Կաթողիկէ ընտանիքներէ ամէնէն նշանաւոր եւ յարգի գերդաստանի մը, Թնկերեան շատախոյններուն կը վերաբերէ: Իւր դաստիարակութիւնը Կ. Պ. սկսած եւ յետոյ իւր ուսումը Վիեննայի Միսիթարեանց եւ ուրիշ բարձրագոյն դպրոցի մը մէջ աւարտած էր: Պետրոս-Թնկեր զանազան ուսմանց եւ գիտութեանց քաջ տեղեակ լինելով հանդերձ՝ կրնայ ըսուիլ թէ աւելի հմուտ լեզուագէտ մ'էր, վասն զի Հայերէնը, Հելլեներէնը, Լատիներէնը, Արաբերէնը, Պարսկերէնը, Իտալերէնը, Անգլիարէնը եւ Ֆրանսերէնը լաւ գիտնալէ զատ՝ ծանօթ էր Սանսքրիթ լեզուին... Գրեթէ քառասուն տարիէն աւելի է որ Պետրոս-Թնկեր Զմիւռնիոյ Պուճա գիւղին մէջ կը բնակէր: Իւր ընտանեաց զրկած դրամական օգնութեան չնորհելով՝ մեռնելէն քանի մը տարի յառաջ Պուճայի մօտակայ Ասքա-Խօմարա, այսինքն, «Սպիտակ Հողեր» ըսուած տեղը գեղեցիկ բլուր մը գնած էր, որուն գագաթը կանգնել տուած էր քառակուսի եւ քարաշէն տուն մը, զոր աւելի փոքր զոգեակ մը պատշաճ է անուանել... Այս տունին մէջ էր որ մարդկային սերունդէն հեռացող... Պետրոս-Թնկեր դարձեալ մարդկային սերնդեան բարեօրման համար կը խորհէր եւ կ'աշխատէր օրն ի բուն: ... Իւր նորագիտ բարբառոյն համար յատուկ Այրբենարան մը, Գերականութիւն մը եւ առձեռն բառգիրք մը շինած էր, որոնք տպել տալով՝ իրեն տունն այցելութեան գացող անձանց կը նուիրէր:

«Այս լեզուին անունը Սահեբայ դրած էր, որ կը նշանակէր համաշխարհային լեզու: Այս լեզուով կը գրէր բանաստեղծութիւններ, կը տողէր ոտանաւորներ, որոնց Ֆրանսերէն թարգմանութիւնը կը կարգային իւր յաճախորդները... Իսկ ասոնց բնագիրը հեղինակէն զատ ոչ ոք կրնար ընթեռնուլ, ըմբռնել եւ իմանալ: Դարձեալ իւր լեզուին յատուկ տառերով Պետրոս-Թնկեր՝ իւր տան դրան վերայ նշանատախտակ մը դրած էր, որոյ վերայ Այգեբատանը բառը քանդակել տուած էր՝ որ կը նշանակէր Տաճար իմաստութեան: Այգեբատանի մէջ կար գրատուն մ'որ աւելի զարգարուած էր լեզուագիտութեան վերաբերեալ գրքերով... Պետրոս-Թնկեր կենդանական ո'եւէ սնունդ, այսինքն միս, ձուկ եւ այլն բնաւ չէր ուտեր...

«Այս տարօրինակ կարծիքներով հանդերձ՝ Պետրոս-Թնկեր իւր ամեն ծանօթներու համակրութիւնը գրաւած էր, իւր պարկեշտ եւ ազնիւ վարմունքովն եւ հրապուրիչ խօսակցութեամբը. վասն զի Պետրոս-Թնկեր ամեն գիտցած լեզուները լաւ խօսելու յատկութիւնն ունէր: Մինչեւ կենաց վերջին օրերն՝ այսպէս ապրելէն զինի, երեկոյ մը Պետրոս-Թնկեր — որ յետին աստիճանի տկարացած էր — իւր տաճարին մէջտեղը տարիներէ ի վեր պեղած եւ պատրաստած գերեզմանին մէջ գիտակից մահուամբ դնաց հանդէտու: Երկրորդ օրն՝ երբ իրեն սովորական այցելուները գացին, զինքը մեռած գտան այդ գերեզմանին մէջ»:

Պետրոս Թնկերեան մեռած է 1881ին²¹: «Պետրոս Թնկերեան» անունով երեք ուրիշ անձեր եւս ծանօթ են, որոնցմէ առաջին երկուքի ծագումը անյայտ է: Բէօլէեան առաջինը սա ձեւով միայն յիշած է. «1815 Մարտ 14ին վախճանեցաւ Պելլեգիկճի Արթին, որ էր երբեմն փեսայ Թնկերեան Պետրոսի, եւ այժմ փեսայ Տուազ Պետրոսի... ամաց 55 կամ աւելի²²: Երկրորդը մեռած է 1856ին եւ թաղուած Ս. Յակոբայ գերեզման»:

¹⁹ Գիւ. Վիեննա Միսիթ. 1828 Յունիս 25 եւ Սեպտ. 11:
²⁰ Արքայապետ Յ. Այվազեան, Շար հայ կենսագրութեանց, Բ., Կ. Պ. 1893, էջ 91—93: Հմմտ. Արեւելք, 1899, Թ. 3946:

²¹ Այվազեան, անդ, էջ 91:
²² Օրադրութիւն, անդ՝ 1815 Մարտ 14:

նատուներ (Հ. Սահակ Վ. Սրապեան, անդ՝ էջ 445): Իսկ երրորդն է որդի Յովսէփ Ամիրայի, որուն վրայ յետոյ:

Բ. Կարապետ Թընկերեանի երկրորդ որդին է Անտոն Թընկերեան, որուն անուն կից կը գտնենք Կ. մը. «Թընկեր Կ. Անտոն²³», «Անտոն Թընկերեան Կ.²⁴», որ Հայ Կաթ. Համայնքի Ազգ. Ժողովներուն մասնակից է 1830ին եւ 1838ին. 1831ին ալ Ս. Փրկիչ եկեղեցւոյ շինութեան Ֆերմանը կարգացողն է Ամիրաներու եւ Ժողովուրդին առջեւ²⁵:

Անտոն ամուսնացած է Թագուհի Հեքիմեանի հետ եւ ունեցած 2 զաւակ. Կարապետ եւ Իսկուհի: Կարապետ (1813—1896) ամուսնացած Քաթինիօ Տեւրիչեանի († 1896) հետ՝ ունեցած է 4 զաւակ. Անտոն, Մատի, Սոֆի եւ Լիւսի: Մատի ամուսնացած Գրիգոր Պիլգիլիճեանի (1851—1920) հետ՝ ունեցած է Կարապետ, Մարտիրոս եւ Գրիգոր անունով զաւակներ, որոնցմէ Կարապետ նշանաւոր եղած է Տիգրան՝ Երկաթ գրական անունով, որուն մասին պիտի անդրադառնանք:

Գ. Կարապետի երրորդ զաւակն է, ըստ Ղեւոնդ Թընկերեանի, Ասատուր, որ մեր Իււանի հին նամակներու մէջ կը յիշուի «Աստուածատուր Տնկերեան» անունով: 1777 Օգոստ. 25ին Տրիեստի Միսիթարեան վարժարանի աշակերտներէն մին է Աստուածատուր Տնկերեան²⁶: Ատկէ հինգ տարի վերջ զինքը կը գտնենք Պոլիս, ուսկից նամակ կը գրէ Տրիեստի Միսիթարեաններուն²⁷:

Դ. Կարապետի մէկ աղջկան յիշատակութիւնը կ'ըլլայ 1816ին գրուած նամակի մը մէջ, ուր կ'ըսուի թէ «Պողոս Աղայն Պիլգիլիճեան է քեռայրն Կարապետ նորըմայի զիկճեան է քեռայրն Կարապետ նորըմայի թնկերեան» (Գիւ. Վիենն. Միսիթ. 1816 Հոկտ. 10): Կարապետ՝ Պետրոս Թնկերեանի վանքի մէջ առած անունն է: Ուրեմն՝ Պետրոս-Կարապետ Թնկերեանի քոյրը ամուսնացած է՝ Պողոս Պիլգիլիճեանի հետ, որով վերջինս կ'ըլլայ փեսայ՝ Գրիգոր Խօնայի որդի Կարապետի: Ըստ Ղեւոնդի՝ Կարապետի աղջիկն է Աննա (ծն. 1796 մեռ. 1842):

Ըստ Ղեւոնդի՝ Կարապետի որդիքն են նաեւ Գրիգոր Վարդապետ, Արքիմ (Քիւրբնի, 1792—1866), որ 4 զաւակ ունեցած է, եւ Պողոս (1797—1862):

2. Գրիգոր Խօնայի զաւակներէն Յովհաննէսի անմիջական սերունդի մասին բացայայտ վկայութիւն մը չունինք: Ղեւոնդ Թնկերեան իր ընտանիքի նախապապը Յակոբ Ամիրա Թնկերեանը համարելով՝ Գրիգոր Խօնայի որդի Յովհաննէսէն եղած կ'ընդունի իրենց ծագումը: Որով կ'ունենանք ծննդաբանական սա յաջորդութիւնը. Գրիգոր Խօնայ — Յովհաննէս — Յակոբ Ամիրա:

Ժամանակագրական տեսակէտով ալ շատ հաւանական է որ Յակոբ եւ իր եղբայրը՝ Յովսէփ որդիքն եղած ըլլան Գրիգոր Խօնայի որդի Յովհաննէսի: Յակոբ եւ Յովսէփ Ամիրաները Թնկերեան գերդաստանի ամենանշանաւոր անձերէն են: Իրենց պատմութիւնը մեծ մասով ծանօթ է: Յակոբի եւ Յովսէփի եղբայրն է Հ. Պողոս Թնկերեան եւ իրենց քոյրը՝ Աննա Քաթրին: Ըստ Ղեւոնդի (Պարիս) Յովհաննէսի զաւակներն են նաեւ Վիլհէմ, Խանում, Տուտու: Որով կ'եղբարկացնենք թէ Յովհաննէս ունեցած է 7 զաւակ:

Ժ. գարու երկրորդ տասնամեակէն սկսած Թնկերեան գերդաստանի գլուխ եւ առաջնորդ կը գտնենք Վլադիմիր Երեք անձեր, որոնք մերթ առանձին եւ մերթ միասին հրապարակ կու գան Կաթ. Հայոց մեծամեծներու շարքին մէջ: Այդ երեք անձերն են Յակոբ, Յովսէփ եւ Գրիգոր²⁸: Առաջին երկուքին համար յայտնի վկայութիւն կայ թէ եղբայրներ են. «... Վթնկերեան Յակոբ եւ գեղբայր նորա Յովսէփ²⁹»: Իսկ երրորդը հաւանօրէն առաջիններուն հօրեղբորորդին է:

Այս երեքէն Յակոբ ծնած է 1755ին, Յովսէփ ծնած է 1763ին³⁰: Գրիգոր ծնած է 1785ին:

Յակոբ եւ Յովսէփ Թնկերեանները յիշուած ասան, իրբեւ գլուխ մեծ տոհմերու, կը կրեն «Ամիրա» եւ «Աղա» տիտղոսները՝ զանազանուելու համար միւս Թնկերեաններէն³¹: Ղեւոնդ Թնկերեան եւս «Ամիրա»

²³ Ասկէրեան, անդ՝ էջ 23:
²⁴ Անդ՝ էջ 42:
²⁵ Հ. Սահակ Վ. Սրապեան, Ս. Յակոբ Ազգ. Յիւանդանոց, Վիեննա 1915, էջ 18:
²⁶ Գիւ. Վիենն. Միսիթ. 1777:
²⁷ Անդ՝ 1782 Սեպտ. 4:

²⁸ Պելլեգիճեան, Պատմութիւն, էջ 190:
²⁹ Անդ՝ էջ 192:
³⁰ Հմմտ. իր Յիւանդանագրութիւնը, զոր քիչ յետոյ պիտի տանք:
³¹ Տե՛ս Հ. Սահակ Վ. Սրապեան, անդ՝ էջ 18—19, 35 եւն:

Ինչպէս վերը ըսինք՝ այս աքսորքի մասին կան նաև ժամանակակից անձերու տեղեկութիւններ, որոնցմէ յիշենք Հ. Գրիգոր Էնիքաճեանի նամակը, գրուած Պոլսէն 1827 չոկտ. 25/նոյ. 9ին. Յովսէփ Մինասեանի գրութիւնը, հրատարակուած մասամբ Կաթողիկէ Արձագանգի 1914ի եւ 1915ի մէջ. Թրքերէն Օրագրութիւն մը՝ նոյնպէս հրատարակուած վերոյիշեալ թերթի մէջ (1914, թ. 148—177) եւ ուրիշներ:

Ասոնցմէ առաջինը գրաբար է եւ անտիպ. իբրևե ակնանտեսի եւ օրը օրին տրուած տեղեկութիւն՝ ամէնէն աւելի վստահելի եւ արժէքաւոր է: Ասիկա յառաջ կը բերենք աշխարհաբար, լրացնելով Յովսէփեանով:

«Թագաւորին բարկութեան իբր պատճառ հետեւեալը կը պատճուի: Յակոբ աղա (Թընկերեան) իբր 2000 քսակ⁴⁶ պարտական էր տէրութեան եւ պատրաստ չունենալուն՝ Մուգաթթա Նազըրըն անոր Յովսէփ եղբորմէն պահանջած էր, որ նոյնպէս պատրաստ դրամ չունենալուն՝ զլացած էր: Յովսէփ աղա իբրև շատ հարուստ ճանչցուած էր եւ Մկրտիչ Մանասեան, որ Յովսէփ աղայի քրոջ Աննա գատընի փեսան էր, Թարապիայի մէկ տան պատճառաւ գժտած էր Յովսէփ աղայի հետ: Մկրտիչ կ'երթայ Նազըրին եւ կ'ըսէ. Մի՛ հաւատաք, Յովսէփ շատ դրամ ունի, խստիւ պահանջեցէք: Նազըրն, որ 1826ին Ծապչի Հրեայն սպաննել տալով արքունի գանձը շատ դրամ լեցուցած էր, Թագաւորին նոր ծառայութիւն մ'ընելու համար՝ կ'ամբաստանէ Թագաւորին Թընկերեան եղբարքը, թէ շատ դրամ ունին եւ Թագաւորին հարկը կը զլանան: Թագաւորը կը զայրանայ եւ մահուան հրաման կ'ընէ:

1827 Սեպտ. 27/չոկտ. 9 Գշ. իրիկուն յանկարծ Քեահեա պէյ կը կանչէ գաղատացի Թընկեր Յովսէփ եւ եղբայրն Յակոբ աղան եւ կ'ըսէ. Երկուքդ այս գիշեր քէսատար օտաւի հիւր էք: Երկրորդ օրը Թագաւորէն հրաման կու գայ որ երկուքը կախուին իրենց տան առջև. Յովսէփ աղա ի Պալթալիմանի եւ Յակոբ աղա՝ Եէնիքէօյ: Երկուքը նաւակ կը դնեն եւ Գալատապաշի հետ կը զրկեն Հիւսէփ Փաշային, որ Եէնիքէօյ կը նստէր, Թագաւորին հրամանը գործադրելու: Յովսէփ աղայի բարեկամ մեծամեծ թուրքեր զայս լսելուն՝ Հիւսէփ Փաշային, որ արդէն

⁴⁶ Մէկ քսակը 500 դրուէ էր:

Յովսէփ աղայի բարեկամն էր, կը գրեն թէ գործադրութիւնը յապաղէ, մինչև որ իրենք Թագաւորին զայրոյթը իջեցնեն եւ այս երկու անմեղներն ազատեն: Նոյն օրը Թագաւորը մեծ խնջոյք կու տար Տաւութ Փաշա վայրը, առաջին մեծ զինուորանոցին աւարտման եւ զինուորական նոր կանոններու հրատարակման առթիւ. այդ օրը զինուորներն այլևս հոն պիտի բնակէին: Յիշեալ մեծամեծք Թագաւորին ոտքը կ'իյնան եւ ի շնորհս Ծահագաւորին կը խնդրեն որ այն երկուքին կեանքը չնորհէ: Թագաւորը կը լսէ խեղդուածքը եւ կը հրամայէ որ երկուքն ալ ընտանեօք աքսորուին. Յովսէփ Կեսարիա, Յակոբ Սերաստիա:

Անդին Հիւսէփ Փաշա, երբ երկու Թընկերեանները կը հասնին, զիրենք խօսքի կը բռնէ երկար, մինչև որ նաւակ մը կը հասնի եւ կը բերէ անոնց աքսորման հրամանագիրը: Արեւամուտէն երկու ժամ առաջ Հիւսէփ Փաշա կը հրամայէ ասոնց որ տներէն կարելի եղածը առնեն, յետոյ տներն իրենց կնքել կու տայ, ինքն ալ իր կնքը վրան կը զարնէ եւ ժամը 11ին ամէնքը «փազար գայրդ» կը դնէ՝ Սկիւտար կ'անցնէ: Հոն կը դիշերեն. յաջորդ օրը պէտքերը կը հոգան եւ կէսօրէն վերջ կը չուեն:

Յովսէփ աղայի տնէն 12 հոգի. այսինքն՝ կինը, վեց որդեքը, չորս աղջիկները եւ ուրիշ երեք ծառայ: Իսկ կրտսեր աղջկան տեղ, որ տասը ամսէ ի վեր հիւանդ կը պտուկէր՝ մօրաքոյրը կ'երթայ:

Յակոբ աղային տնէն կը մնան Իզնատիոս որդին, որ յիմար էր եւ երկու աղջիկները, որոնցմէ մէկը՝ Վերոնիկա արդէն Անկիւրիա աքսորուած էր. իսկ միւսը նոյն օրը փախչելով Պէկոզլու Լատինաց Ս. Աստուածածին եկեղեցին՝ անկէ ալ Միւսիւ Թէսալային տունը անցած էր» (Դիւ. Վիենն. Միւթ. 1827 չոկտ. 25):

Յովսէփ Մինասեան (Կաթ. Արձագանգ, 1914, էջ 374) Յակոբի ընտանիքի մասին կ'աւելցնէ. «Այս միջոցին Յակոբ աղային տղան՝ Գրիգորիկը ու Աբրահամիկը վախերնուն պահուած էին: Բարեկամք զացին գտան պահուած տեղումներին, շատ ընդգիծութիւն ըրին թէ չենք երթար. ըսին անոնց թէ չերթաք նէ ձեր Փամիլիային գէջ կ'ըլլայ, ձեր հայրը կ'ընայ ըլլալ որ աս սէպէպովս խաղայի մը կը հանդիպի, մեղք են, մի՛ ընէք, ըսե-

լով՝ շատ խօսք ըլլալէն վերջը զասոնք խօսեալ ըրին ու հանեցին դուրս, տարին Իւսկիւտար. էրթէսի օրը ընդ ամէնը ճամբայ ելան, հրաման Թագաւորական այս էր. Թընկեր Յակոբը Սըվազ եւ Յովսէփը Ղայսերի Փամիլիայօվնին, օրվան մը ճամբայ ելան, Գրիգորիկը գաղտուկ փախաւ, եւ մարդ չեմացաւ նաեւ միւսաշիրները պիլէ, յետոյ ժամանակ անցնելէն վերջը իմացանք որ շիտակ Բարիզ գացեր է»։ Յակոբ Ամիրա Թընկերեանի Միքայէլ որդին ալ այդ միջոցին Բուսի վալիսին քով կը գտնուէր, զայն ալ յետոյ կը տանին կը խառնեն միւսներուն մէջ (Կաթ. Արձագանգ, անդ՝ էջ 516)։

Հ. Գ. Էնքսէրճեան իր վերոյիշեալ նամակին վերջը կը գրէ որ «Ամբողջ ընտանիքը, որ ամէն գիւրութիւն կը վայելէր առատօրէն՝ լալով ու կոծով կը մեկնի: Ամայն 15ին Յովսէփ Աղայի գրասենեակը կը բանան, հազիւ 70 քսակ պատրաստ դրամ կը գտնեն: Գրքերը կը քննեն եւ կը տեսնեն որ 3000 քսակէ աւելի առնելիք ունի Իւլիմայէ եւ թուրք մեծամեծներէ, իբր 2000 քսակ արհեստաւորներէ եւ սեղանաւորներէ եւ 10-000 քսակէ աւելի առնելիք զանազան փաշաներէ, որոնց փոխ տուած էր տոկոսով: Նազըրը կ'ամչնայ եւ չի գիտեր ի՞նչ պատասխանէ Թագաւորին: Անկէ վերջ զանց կ'ընեն Յակոբ աղայի սենեակը բանալ. նոյնպէս Թընկերեանց Պէյօղլուի տունը չեն կնքեր»։

Թընկերեան Յակոբ եւ Յովսէփ Ամիրաները աքսորելէն վերջ անոնց տները կը ծանրեցնեն անուրբով: Յակոբ Ամիրայի մէկ տունը 14-000 դրուէի կը ծախուի: Յովսէփ Ամիրայի տունը, որ 400-000 դրուէ կ'արժէր՝ 20-000ի կը ծախուի: Յակոբ Ամիրայի մէկ տունը, որ Փրանկիսկեանց վանքին Ս. Աստուածածին եկեղեցւոյ կից էր՝ կաթ. գետտաներ կը ջանան ձեռք բերել՝ ազատելու համար՝ չեն յաջողիր (Դիւ. Վիենն. Միւթ. 1828)։

1828ին կ'աքսորեն «Թընկեր ուշաղբ (ծառայ) Արթիւն ի Մանիսա»։ Նոյնպէս «Թընկեր կէպէնի Յովսէփն ալ բռնեցին, բայց կըր որովհետեւ Թընկերեանց գրադիրն է, պահեցին որ հաշիւները յանձնէ» (Դիւ. Վիենն. Միւթ. 1828)։

1830ին արքայական հրովարտակով հայ աքսորականները կը վերադառնան (Պէրպէսական, Պատմ., էջ 212—213: — Ասկէրեան,

անդ՝ էջ 21): Ասկէրեան կը գրէ որ աքսորականները գունդագունդ վերադարձան, ուրախութեամբ գրկախառնուեցան եւ երդուեցան «մոռանալ եւ թաղել յախտեան կան լուսթեան մէջ» ամէն եղածը:

Գաղատիա աքսորուողներէն մաս մը արդէն 1830 Մայիսին ճամբայ ելած էր դէպի Պոլիս (Դիւ. Վիենն. Միւթ. 1830 Մայիս 8): Ուրիշ մաս մը սակայն ճամբայ կըրցած է Ելլի միայն 1831 Յունուար 18ին, ինչպէս կը պատմէ Գաղատիոյ կարաւանին ընկերացող Հ. Գրիգոր Էնքսէրճեան (Դիւ. Վիենն. Միւթ. 1831 Յունուար 25):

Երբ ազատութեան հրովարտակ կ'ելլէր՝ որոշ անձերու եւ խումբերու անունով զատ զատ հրամանագիր կը տրուէր: Ազատութեան հրամանագիրներ հանել տալու համար շատ ախտաւոր են Գաղղիոյ եւ Աւստրիոյ դեսպանները: Վերադարձի մասնաւոր արգելքի հանդիպած են Յակոբ եւ Յովսէփ Ամիրա Թընկերեանները, որոնց դարձը յետաձգուած կամ յապաղեցուած է (Դիւ. Վիենն. Միւթ. 1830 Յոգոստ. 25): Միեւնոյն արգելքը կը յիշուի նաեւ Յակոբ Ամիրայի որդի Միքայէլի եւ Գրիգոր Թընկերեանի որդի Պետրասին համար («Թարիխի Լուսթիլի եւ Թարիխի ձէվտէթ» անունով ժամանակագրութիւններու թարգմ. Վիենն. Միւթ. Մատենադարանի մէջ):

Յակոբ եւ Յովսէփ Ամիրաներու, ինչպէս նաեւ Միքայէլի եւ Պետրասի վերադարձը տեղի ունեցած ըլլալու է 1831ի ընթացքին:

Ասոնց վերադարձէն յետոյ վերադարձուած են իրենց նաեւ բոլոր տներն ու ստացուած քննքը:

Ասկէրեան կը պատմէ որ Պիոս Ը. Ս. Քահանայապետը օրհնութեան թուղթեր կը զրկէ բոլոր աքսորքէ վերադարձողներուն⁴⁷:

Նկատենք այժմ Գրիգոր Սօճայի որդի Յովհաննէսի 7 զաւակներու կեանքը առանձին առանձին:

ա. Յակոբ Ամիրա Թընկերեանի մանկութիւնը անձանօթ է: Ղեկնող Թընկերեանի համաձայն ծնած է 1755ին: Երբ 1817ին առաջին անգամ կը յիշուի՝ արդէն գլուխ է ամբողջ տոհմի մը եւ իբրև երեւելի Թընկերեան մը՝ կը մասնակցի երկու անգամ Համազգային

⁴⁷ Ասկէրեան, անդ՝ էջ 22:

որ ամուսնացած է «Թերզի Վիչէնի» հետ եւ ունեցած քանի մը զաւակ, որոնցմէ մէկը 1817 Յունուար 1ին ժանտախտէն կը մեռնի, ինչպէս կը գրէ Քէօլէեան. «Թերզի Վիչէնի որդին մեռաւ մահէն, որ էր քեռորդի թնկը շ. Պողոսին մերայ» (Օրագրութիւն, անդ՝ 1817 Յունուար 1). Երկրորդ զաւակը՝ Յովսէփ՝ 1831ին ժանտախտէ վարակուած է, բայց կ'ազատի. «1831 Սեպտ. 7 յաւուր Երկուշաբթի, որ էր տօն միւս աւուրն Մնունդ Ս. Աստուածածնի, մտի ի ծառայութիւն ժանտամահի: Գնացի նախ ի Թարապիս առ որդի Աննա Քատրն թընկըրեան, անուն նորա Յովսէփ, հոգացի Աստուծով հոգեւորն նորա, առողջացաւ», կը գրէ շ. Աթանաս Վ. Տողրամաճեան, Անտոնեան Միաբանութեան անդամ եւ Հայ Կաթ. հիւանդանոցի ժանտախտաւորներու հոգաբարձուն (շ. Սահակ Վ. Սրապեան, անդ՝ էջ 34):

Աննա Քատրն ունեցած է նաեւ աղջիկ մը, զոր տուած է Մկրտիչ Մինասեանի, որ ինչպէս նախապէս տեսանք՝ յուր դեր կատարած է Յակոբ եւ Յովսէփ Ամիրա Թընկըրեաններու պատահած դժբախտութեան մէջ:

Աննա Քատրնի մահուան թուականը անձնօթ է:

Ե.—Է. Յովհաննէսի զաւակներէն Վիչէնի ամուսնացած է Վերոն Գաբրիելեանի հետ եւ ունեցած 5 զաւակ. Անտոն, Գրիգոր, Պետրոս, Տիրուհի եւ Աւիֆ: Խնամու է Տուառուի մասին ծանօթութիւն չունինք:

3. Գրիգոր Խոճայի երրորդ որդի՝ Յարութիւնի զաւակներն են, ըստ Ղեւոնդի, Միքայէլ (1795 + 1867) ամուսնացած Երանուհի Ինիսիեանի (+ 1835) հետ. Վիչէն (1799 + 1879) ամուսնացած Սոփի Խոճայեանի (+ 1870) հետ եւ Լիւսի (1808 + 1873) ամուսնացած Պետրոս Եղաբեկեանի (1798 + 1875) հետ: Լիւսի ունեցած է 3 աղջիկ. Մատի, Վերոնիկ, Տիրիւկ: Մատի (1834 + 1902) կինն է Միքայի Պէյ Տիւրքեանի (1817 + 1890):

4. Գրիգոր Խոճայի անդրանիկ որդի Թընկըր Միմոն ունեցած է 2 մանչ եւ 2 աղջիկ: Մանչերուն անուններն են. Գրիգոր եւ Պողոս. իսկ աղջիկներու անուններն անձնօթ են:

ա. Գրիգորի անուան հանդիպեցանք արգէն Յակոբ եւ Յովսէփ Ամիրաներու հետ ⁶⁰,

որուն արհեստն ալ «հատալաճառութիւն» էր ⁶¹: Անձնօթ է իր մահուան թուականը: Գրիգոր ամուսնացած է Մանասէ Գրիգորի աղջկան՝ Տիրուհիի հետ (Դիւ. Վիչէն. Միմոն. 1819 Հոկտ.) եւ ունեցած 8 զաւակ. Միմոն, Աննա, Թագուհի, Երանուհի, Վարդուհի, Լուցիա, Յովսէփ եւ Պետրոս:

Միմոն՝ ծնած 1807ին՝ մտած է Չմամուր Միաբանութեան մէջ եւ վարդապետ ձեռնադրուած: 1833ին կարգուած է առաջնորդ Բէյրութի Հայ Կաթողիկէներու՝ Կաթողիկոսական փոխանորդի տիրոջսով, ուր 20 տարի արգելանքու գործունէութիւն ունեցած է: Իր ջանքերով եւ Անտոն Մըսրըլեանի, Միքայէլ Ապտուլլահեանի, Խայթեանց ընտանիքի, ինչպէս նաեւ Լիբանանցի կաթ. վաճառականներու՝ Անկուլէի եւ Պարայի նուիրատուութեամբ եկեղեցի մը կը շինուի Բէյրութի մէջ եւ 1851 Փետր. 2ին կ'օծուի, անունը դնելով Աւետիան Եկեղեցի: 1853ին ալ կը յաջողի Հայ Կաթ. մանուկներու կրթութեան համար դպրոց մը բանալ՝ Լուսաւորչեան անունով, որուն մէջ կ'աւանդուին հայերէն, թրքերէն եւ արաբերէն լեզուները: Նոյն տարին դպրոցը կ'ունենայ 32 աշակերտ ⁶²:

1845ին Միմոն Վ. Թընկըրեան Պոլիս գտնուած եւ Հասունեանի կողմէ փոխայցի դացած է Հայոց Պատրիարքին ⁶³:

Միմոն Վ. Թընկըրեան մեռած է 1853 Օգոստ. 7ին, 46 տարեկան: Մէքմ. Հավատիս ⁶⁴ կը գրէ իր մահուան օթիւ. «20 տարի Բէյրութի ազգային աշխարհական եւ հոգեւոր գործերը վարած, եկեղեցի եւ դպրոց հաստատած ըլլալով՝ ազգը երախտապարտ ըրած է իրեն հանդէպ»:

Գրիգոր Թընկըրեանի զաւակներէն Աննայի, Թագուհիի եւ Երանուհիի մասին տեղեկութիւն չունինք. Վարդուհի եղած է կուսակրօն մայրապետ. Լուցիա ամուսնացած եւ ունեցած է 4 աղջիկ. Թագուհի, Աննա, Սրբուհի եւ Մարիամ, որոնց մասին նոյնպէս ծանօթութիւն չունինք. Յովսէփ ունի առանձին տապանազիր մը, որմէ կ'իմանանք թէ

⁶¹ Անդ՝ էջ 190: — 1830 Օգոստ. 25ին Հայ Կաթ. իշխանները Վիչէնայի Միմոն. Արքայապետ Ազարեանի նամակ կը գրեն. 11 ստորագրողներու մէջ են. Անտոն Թնկըրեան եւ Գրիգոր Թընկըրեան (Դիւ. Վիչէն. Միմոն. 1830 Օգոստ. 25):
⁶² Մէքմ. Հավ. 1853, Թ. 173:
⁶³ Արշալոյս Արարատեան, Չմիւսնիա 1845, Թ. 233:
⁶⁴ էջ 395:

ծնած է 1825ին եւ մեռած 1893 Ապրիլ 22ին: Պետրոս կը յիշուի 1828—1830ի Գաղատիա աքսորուածներէն անոնց կարգին, որոնց համար մասնաւոր արգելք յարուցուած է, որպէս զի չուտով չվերագարձուին (Չեռագիր Վիչէն. Միմոն. Մատենադարանի մէջ):

Բ. Թընկըր Միմոնի երկրորդ որդին՝ Պողոս՝ մասնակցած է Հայ Կաթ. Համայնքի առաջին Ազգ. Ժողովքին ⁶⁵: Իր մասին ուրիշ ծանօթութիւն կը պակսի:

Գ.—Դ. Թընկըր Միմոնի երկու աղջիկներու հարսանիքը կը յիշուի 1816ին. «1816 Յուլիս 23ին հարսանիք թնկըրեան Միմոնի երկու դստերցն ի միասին, զմինն Ետուն Նարինեան Արքաիւմու, եւ զմիւսն Եղբոր Գէորգ Վարդապետ Փափագեանի» ⁶⁶:

Ղեւոնդի համեմատ՝ Միմոն Թընկըր ունեցած է 11 զաւակ, որոնցմէ մին է Յովհաննէս (1793 + 1854), որ Մատի Թուրումպանեանի հետ ամուսնանալով՝ ունեցած է Միմոն (+ 1911) անունով որդի մը, որ եղած է նշանաւոր փաստաբան: Վերջինս ամուսնացած Թագուհի Գանթարեանի (+ 1919) հետ՝ ունեցած է աղջիկ մը՝ Մատի (ծն. 1877), որ եղած է Պոլսոյ հեռախօսի կենդրոնին տնօրէնուհին:

Թընկըր Միմոնի զերդաստանը ունի Մահարձան մը, որուն մէջ ներկայացուած է իր հարձան մը, որուն մէջ ներկայացուած է իր որդւոյն՝ Գրիգորի տոհմածառը, որուն մէջ սակայն չենք գտնել Պետրոսի անունը, ինչ որ կասկածելի կու տայ Պետրոսի մասին մեր վերը տուած Չեռագիր ազգրուրի նկատմամբ: Ահա Մահարձանը.

Մահարձան
Ազնուագարմ Գերդաստանի
Միմոն Թընկըրեանց կոչեցելոյ՝
Տապանս այս հանգստարան
Ի յիշատակ յաւերժական
Բարեպաշտօն գերդաստանի
Ազնուագարմ Գրիգոր տոհմի
Որդի Միմոն վեհ իշխանի
Եւ կողակցի պերն Գրիգորի
Տիրուհոյ եւ որդւոցն
Առաքելապատակ Միմոն վարդապետի
Կաթողիկոսական Միաբանի
Աննայի, Թագուհոյ, Երանուհոյ

⁶⁵ Ասկէրեան, անդ՝ էջ 23:
⁶⁶ Օրագրութիւն Անտոն Քէօլէեանի 1816 Յուլիս 23:

Եւ Վարդուհոյ կուսակրօնի
Եւ Լուցիայ եւ սրա դստերացն
Թագուհոյ, Աննայի, Սրբուհոյ եւ Մարիամայ
Յիշատակ նոցա օրհնութեամբ Եղիցի
1892

Յովսէփ Թընկըրեան որդի Գրիգորի
ծնեալ յամի Տեառն 1825. հանգեալ ի Տէր
յամի 1893ի 22 ամսեանն Ապրիլի ⁶⁷:

(Շարունակելի:) Զ. Ե. ՊՈՂՈՍԵԱՆ

ՄԻՍԱԲ ՔԵԼԷՇԵԱՆ, Սիւ Մատեան. պատմական, բանասիրական, տեղագրական, ազգագրական եւ յարակից պարագաներ: Պէյրութ, տպ. Հայ Ճեմարանի, 1949, 40, էջ ԺԵ + 771 (191 պատկերով եւ 3 քարտէսով):

«Միմոն պատմութիւնը Հայակիւիկիոյ պատմութիւնն է» կը գրէ հեղինակը իրաւամբ: Սիւ մայրաքաղաքն էր Հայկական Կիլիկիոյ թագաւորութեան. միաժամանակ եղած էր կաթողիկոսական աթոռին նիստը: Ան անուանուած է «Սիւ թագաւոր», եւ աշխարհն Միսուան: Սիւ թագաւոր ունէր իր հովանուոյն տակ քաղաքներ, բերդեր եւ գիւղեր, ունէր վանական հաստատութիւններ: Երբ կորսնցուց Մայր Հայաստան իր քաղաքական ազատութիւնը, Միսուան իր հովանաւորութեան տակ հաւաքեց Հայ բեկորները, եւ կազմուեցաւ Հայկական Կիլիկիան, թագաւորական ճոխութեամբ: Թէպէտ թագաւորութիւնը իր 200 տարուան կեանք ապրեցաւ, բայց Հայ Ժողովուրդը իր կաթողիկոսներու հովուութեան տակ պահեց իր գոյութիւնը հոն, հակառակ ամէն գրկանքներու, մինչեւ 1915, երբ օսմանեան հայաջինջ քաղաքականութիւնը բռնաբար տեղահան ըրաւ Հայ Ժողովուրդը ինչպէս Հայկական նահանգներէն, նոյնպէս Հայկական Կիլիկիայէն. իսկ երկիրը մնաց աւերակ: Կոտորածներէն վերապրող Ժողովուրդը գտաւ հիւրասէր աշխարհներու մէջ ասպնջականութիւն. ծլաւ եւ աճեցաւ միւսանդամ, թէպէտ ցրուած ի սփիւռս աշխարհի, բայց կապուած հայրենիքի:

⁶⁷ Քօսեան, անդ՝ էջ 145—146: